

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀԱՍՑԵ՝ ԲՎՄՄՍՆ, ՇԱՐՈՒՅԱՆ 20/32  
2003 թ. ԳՆՈՒՄՆՈՒՄ (0285) 5 25 63  
(091) 45 90 47  
(077) 06 28 02

ԳԻՄՆԱԿՈՒՄ ԵՎ ԳՐԱՏՈՒՄ  
«ՄՅՈՒՆՅԱՅ ԱՇԽԱՏՈՒՄ» ԱՐԽԱՏԱԿՈՒՄ  
ՊԱՏԱՆԱՏԱՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գրանցման վկայականը՝ 01Մ  
000231: Թերթը տպագրվում է  
«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:  
Հասցեն՝ ք. Երևան,

Արշակունյաց 2: Ծավալը՝  
1 տպագրական մամուլ:  
Տպագրմանը՝ 2000, գինը՝  
100 դրամ: Ստորագրված է  
տպագրության 05.09.2014թ.:

ՀԱՐԱԹ  
6 ՄԵՊԵՏԵՐԵՐԻ  
2014թ.  
№ 21 (329)

Բոլոր գոյացությունների սկիզբն Ասված է, բոլոր բարիքների սկիզբը՝ սեր, բոլոր շնորհների սկիզբը՝ խոհականությունը:

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ

# Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

## Եվ Յիսուս ասաց. «...Պիպի երկրպագես քո Տէր Աստուծո՛ւն եւ միայն նրա՛ն պիպի պաշտես»

Շաղապը, 4-9-րդ դարերում լինելով Ծղուկ գավառի մայրաքաղաքը, ունեցել է իր ծաղկուն շրջանը, այսօր էլ գործել Սյունյաց աշխարհի մայր եկեղեցին՝ Սուրբ Ստեփանոս Նախավկան: Ազգագրագետ Երվանդ Լալայանն ապացուցել է, որ այդ նույն վայրում է հենդագայում շինվել Սուրբ Գեորգ եկեղեցին, որի կառուցման ստույգ փարեթի վրա հայտնաբերվել է հետազոտված պահպանվել է եկեղեցու վերակառուցման փարեթի վրա՝ 1848թ.: Այն, որ Սուրբ Գեորգ եկեղեցին կառուցվել է մայր փառաբանի հիմքի վրա, վկայում են փարաձեղում հայտնաբերված խաչքարերը, գերեզմանաքարերն ու եկեղեցու հիմքում գտնված քարերը:

2014թ. օգոստոսի 28-ը, հիրավի, շաղատեցու համար դարձավ պատմական՝ եւ որպես Սուրբ Գեորգ եկեղեցու վերածննդի օր, եւ որպես Շաղատ համայնքի օր: Ինչպես ասում են, հարուստ է ոչ թե նա, ով կարողություն ունի, այլ նա, ով նվիրաբերում



2014թ. օգոստոսի 28-ը. վերածված Սուրբ Գեորգ եկեղեցին

է: Այս խոսքի վկայությունը եղավ Շաղատ համայնքում Սուրբ Գեորգ եկեղեցու վերածննդի արարողությունը, որի վերանորոգման աշխատանքները բացառապես կատարվել են Սյունիքի սերնդադարերի միության նախագահ, Շաղատ համայնքի պատվավոր անդամ Գագիկ Խաչատրյանի եւ շաղատեցիների համառ ջանքերով:

Շաղատում շուրջ 40-50 տարի իշխանությունը Խաչատրյանների գերդաստանի ձեռքում էր: Գագիկ Խաչատրյանի հայրը 30 տարի եղել է գյուղի կոլտնտեսության նախագահ, ում փոխարինել է Գագիկ Խաչատրյանը. «Մշտապես մտածել եմ գյուղը պահպանելու, արտագաղ-

թից խուսափելու մասին, որ արդեն սպառնում է Շաղատ համայնքին: Շաղատի մասին գիրքը հրատարակելուց հետո իմ հաջորդ քայլը Սուրբ Գեորգ եկեղեցու վերանորոգումն ու վերածնունդն պիտի լինի, որի նպատակով դիմել եմ տարբեր ատյաններ եւ պետական աջակցություն չստանալով՝ որոշել սեփական միջոցներով սկսել եկեղեցու վերանորոգումը: 2-2.5 տարում վերանորոգեցինք եկեղեցին, ամենամեծ դժվարությունը պետական ատյաններից համապատասխան թույլտվություն ստանալն էր: Աստուծո օգնությամբ կարողացել ենք հասնել մեր նպատակին»:

ՇՆՐՈՒՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 2

### Խմբագրական

## Տոն, որ նախեւառաջ հիշողության ու ոգեկոչման օր էր

Ավա՛ղ, Սյունյաց գահագլուխ իշխանների աթոռանիստ Շաղապ գյուղաքաղաքի նույնիսկ ավերակները չեն պահպանվել: Մինչդեռ, չորս դար (4-9-րդ դդ.) շարունակ, հենց Շաղապն էր Սյունիքի մայրաքաղաքը:

Ավա՛ղ, չեն պահպանվել նաեւ Սյունյաց աշխարհի մայր տաճարի՝ Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու ավերակները. քարակոփ չքնադաշեն եկեղեցի էր, որպիսի հրաշալի ճարտարապետական կառուցվածք ուրիշ ոչ մի տեղ չկար: Այդ եկեղեցին էր, որ սկզբնապես դարձավ Սյունիքի մետրոպոլիտոսյան գահամիստը (մինչեւ 839թ.): Այդ ժամանակներում էր, որ Սյունյաց աթոռը համարվեց Հայոց պատրիարքի նախաթոռ:

Սուրբ եւ բազմերանելի Մեսրոպ Մաշտոցը Շաղատում դպրոց հիմնեց եւ «սովորեցնելու համար մանուկներ ժողովեց»՝ ունենալով քաջ Սիսական Վասակի որդիական աջակցությունը:

Հայոց ուսուցչապետի հետ էր «գիտությունների մեջ անհաղթելի Անանիան», ով մոտ չորս տասնամյակ գահակալեց Սյունյաց թեմում, ով 449թ. մասնակցեց Արտաշատի պատմական ժողովին, ով կատարեց հույն մատենագիրներից շատերի երկերի թարգմանությունը, ինչպես եւ հեղինակեց առաջուր իրենց արդիականությունը պահպանող ճառեր:

Այդ ժամանակ Շաղատում էր նաեւ Բենիամին Երեց անուն շնորհալի թարգմանիչը, ով օգնեց Մաշտոցին՝ ստեղծելու նշագրեր գարգարացիների համար, ով եղավ Սյունիքի դպրոցների առաջին վերակազմը:

Շաղատի մետրոպոսի դպրոցի հիման վրա ստեղծվեց Սյունյաց (Շաղատի) վարդապետարանը, որի նշանակալի դերը հայոց մեջ անուրանալի է: Ըստ պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանի՝ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևն այդ վարդապետարանին վստահեցին Սուրբ Գրքի՝ Աստվածաշնչի թարգմանությունը, որն իր կատարելությամբ կոչվեց «Թագուհի թարգմանություն»:

Պարտավոր ենք հիշել հայոց համբավավոր այրերին, ովքեր տարբեր ժամանակներում վախճանեցին վարդապետարանը կամ հանդիսացան վարդապետարանի սյուներ՝ Պետրոս Սյունեցի Քերթող (Սյունյաց թեմի առաջնորդ 547-556թթ.), Վրթանես Քերթող (Սյունյաց մետրոպոլիտ 559-582թթ.), Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ 604-607թթ.), Մաթուսաղա Քերթող (Սյունիքի պրոտոֆրոնտես 634-ՇՆՐՈՒՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 3

### Հոգեւոր

## Հովան Եպիսկոպոս Հակոբյան. «Ձեր աղոթքների շնորհիվ է, որ Հայաստան աշխարհը պիպի գտնի իր անդորրը»

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետի խոսքը

Վերածնունդ Սուրբ Գեորգ եկեղեցին՝ ականալից հաղորդակից ենք դառնում Աստուծո հետ: Հաճելի է, երբ մարդու գրուցակիցն Աստված է, այսինքն՝ եկեղեցին վերածնունդ արարող է արարիչ, մարդ է Աստված հարաբերությունն ենք հաստատում: Սուրբ մյուռոնի օգնությամբ եւ Սուրբ Հոգու ներգործությամբ այս եկեղեցին



Հովան Եպիսկոպոս Հակոբյան

վերածվեց, պայծառակերպվեց, այսինքն՝ վերածվեց Աստուծո տան, քանզի մինչ այդ քարեղեն կառույց էր:

Այս պահից սկսած՝ պարտավորություն է դրված շաղատեցիների եւ շրջակա գյուղերի

բնակիչների վրա՝ պահպանել եկեղեցին, որ միշտ պիտի մարդաշատ լինի, որ իր աղոթքը պիտի հասցնի Աստուծո: Ձեր աղոթքների շնորհիվ է, որ Հայաստան աշխարհը պիտի գտնի իր խաղաղությունը, իր անդորրը. հայ գինվորը մեր աղոթքների կարիքն ունի:

Սիրելիներ, եթե մեզանից յուրաքանչյուրին հարցնեն, թե ինչպիսի հայերի անուններ գիտենք՝ առանց մտածելու կասենք Գրիգոր Լուսավորիչ, Սահակ Պարթև, Մեսրոպ Մաշտոց: Նրանք այն անմահներ են, ովքեր ապրեցին քրիստոնեաբար եւ ապրեցին քրիստոնեությունը, եւ մենք՝ իբրեւ նրանց արժանի զավակներ, պարտավոր ենք պահպանել անցյալի արժեքները, մեր նախահայրերի թողած ավանդները: Եկեղեցին չպիտի լինի զուտ մշակութային կոթող, այլ պիտի լինի Աստուծո տուն՝ իր ամենօրյա աղոթքներով, որ պիտի հիշեցնի համայնքի ծաղկուն լինելու մասին: Եկեղեցին անցյալ չէ, այն ներկա է, հավերժություն, քանի որ առաքելություն ունի, բայց այն առանց ժողովրդի կլինի միայն քարե կառույց:

Արդ, օգտագործելով այս բարեպատեհ առիթը՝ ցանկանում ենք շնորհավորել ձեզ, այս եկեղեցու բարեարին եւ աղոթք բարձրացնել այն անձանց համար, ովքեր փոքր-ինչ մասնակցություն են ունեցել եկեղեցու վերածննդի համար: Մեր աղոթքն է, որ Տերն օգնի բոլորին, Աստուծո ամենասուրբ աջի ներքո պահի, պահպանի ձեզ, ձեր ընտանիքները. Սուրբ Խաչը՝ ձեզանից անպակաս:

Տոնախմբություն Շաղատում

ԼՍԽԱՍԱՎԱՐԸ ՆՈՒԲԱՐ ՈՎՎԵՑԱՆԻ



# Եվ Յիսուս ասաց. «...Պիտի երկրպագես քո Տէր Աստծո՛ւն եւ միայն Նրա՛ն պիտի պաշտես»

ՍԿԻՉԲԸ՝ ԷՏ 1

Վերանորոգման աշխատանքների գումարի 80%-ը ներդրել է Գագիկ Խաչատրյանը, իսկ 20%-ը ձեռք է բերվել շաղատեցիների հանգանակության շնորհիվ: Ընտանիք կար, որ կատարել է ընդամենը 1000 դրամի ներդրում, բայց կարելու էր այս պարագայում գումարի չափը չէր, այլ պատրաստակամությունը՝ սկսած գործն ավարտին հասցնելու համար: Նախաձեռնությունը մեծ տարածում գտավ, եւ արդյունքում կարողացան ամբողջովին վերանորոգել եկեղեցին, կահավորել այն, կառուցել խաչքար, բարեկարգել շրջակայքը:

Յետագայում տարածքում ոռոգման համակարգ պիտի անցկացնեն, շրջակայքի բարեկարգումն ավարտին հասցնեն:

Շաղատը հարուստ է մատուռներով, հուշարձաններով, խաչքարերով, որոնք նույնպես պահպանության խնդիր ունեն, եւ, բարերարի խոսքով, այս նախաձեռնությունը շարունակական բնույթ է ունենալու: Եկեղեցու վերանորոգման ընթացքում միջազգային կազմակերպությունների չեն դիմել, փորձել են շաղատեցի մեծահարուստների աջակցությունը ստանալ, բայց արձագանք չեն ստացել: չունեւոր խավն ավելի արագ արձագանքեց:

Եկեղեցու վերածումը կատարեց Մայր Վրոջ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Յուլիան Եպիսկոպոս Յակոբյանը, ինչին հաջորդեց կնուճի արարողությունը Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ

տեր Մակար վարդապետ Յակոբյանի եւ քահանաների մասնակցությամբ: «Օգոստոսի 28-ն անձամբ ինձ համար, իմ ընտանիքի համար, իրոք, մեծ խորհուրդ ունի, այդ օրն իմ հայրիկի ծննդյան օրն է, եւ ճակատագրի բերումով այդ օրն է ծնվել նաեւ իմ Գագիկ թոռնիկը. կնունքի երթը սկսուն ենք նրանով եւ պատվիրում, որ իր ամբողջ կյանքում պահպան լինի եկեղեցուն», - նշեց բարերարը: Կնուճի արարողությանը համընթաց տոնական համերգ էր անցկացվում, որի ընթացքում Գագիկ Խաչատրյանը մասնավորապես նշեց. «2014թ. օգոստոսի 28-ը Շաղատի պատմության մեջ ազդարարում է նոր էջ, քանզի շաղատեցու համառ ջանքերով, Աստծո օգնությամբ կարողացել ենք վերածնել մեր համայնքի հոգեւոր տաճարը, այն եզակի շինությունը, որ մեզ կապում է Շաղատի անցած պատմության հետ: Ինչպես Շաղատն ու շաղատեցին, այնպես էլ հայ ժողովուրդն աշխարհին ներկայանում են իրենց բազմադարյան պատմությամբ ու կենսագրությամբ, որով հպարտանալու եւ քաղաքակիրթ ժողովուրդների շարքը դասվելու, պատմության մեջ ունեցած իրենց դերն ու նշանակությունն ընդգծելու իրավունք ունեն: Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցին, որ, ինչպես արդեն նշել ենք, եղել է Սյունյաց աշխարհի

մայր եկեղեցին, եղել է քարաշեն, գմբեթավոր, կենտրոնակազմ հորինվածքով, ուղղանկյուն խորաններով, միահարկ եւ միասնական տանիքներով, բեմի խորանի տակ ներքնակ-թաքստոցով, լուսամուտներն ունեցել են մետաղական փեղ կեր: Շաղատի հոգեւոր տաճարը, ըստ պատմիչների, իր ճարտարապետական առանձնահատկություններով տարբերվել է մյուս եկեղեցիներից, ցավոք սրտի, այն չի պահպանվել»:

Ժամանակին Շաղատում նշել են Սուրբ Գեորգի տունը, որ չի պատկանում ավանդական տոների շարքին, բայց ընդունված տոն է եղել հայոց մեջ եւ ուղեկցվել է մատաղով եւ ուխտագնացությամբ: Այդ օրը Շաղատում, երբ հնչել են եկեղեցու զանգերը, մարդիկ խաչակնքել են, աղոթել, մասնակցել սուրբ պատարագին, մատաղ արել, բերք ու բարիքով լցրել սեղանները, թխել շաղատեցու գաթան, համտեսել ճախաթթուն եւ ուրախությամբ նշել այդ տոնը: Տոն, որ երկարատե դադարից հետո Շաղատում փորձում են վերականգնել՝ պապերի ավանդույթը շարունակելու նպատակով:

Տոնական սեղանները՝ ավանդական ուտելիքներով, Շաղատի գաթայով ու ճախաթթունով, իրենց շուրջն էին իրավիճակում շաղատեցիներին ու հյուրերին: Բոլորը համտեսում էին մատաղն ու հարիսան



Գագիկ Խաչատրյան



ԼՍԽԱՍԱՎԱՐԸ ՆՈՒԲԱՐ ՈՎՎԵՑԱՆԻ

ԼՍԽԱՍԱՎԱՐԸ ՆՈՒԲԱՐ ՈՎՎԵՑԱՆԻ

ԼՍԽԱՍԱՎԱՐԸ ՆՈՒԲԱՐ ՈՎՎԵՑԱՆԻ

**Եկեղեցու վերածնունդը գուցա ամենաբացահայտված և ամենաազդեհն էր Շաղատի միջոցառումներից: Գագիկ Խաչատրյանը, որի համբավը տարածվել էր ողջ Հայաստանում: Թանգարանի բացումը կատարեց Սյունիի մարզպետ Վահե Նակոբյանը: Թանգարանում ներկայացվել են գյուղական դարձ կենցաղային իրեր, հսկայական երկանգ, որի միջոցով կտավաշից ձեռք էին ստանում: Կտավաշի սեղանը վառարանում բռնում էին, սրում երկանգով, որ մոտեցնում էին եզմեր: Պահպանվել է նաև հսկայական գերաններով ծանրացված կտավաշը՝ ստանում էին ձեռք: Կտավաշի ձեռքն օգտագործվել է նախառաջ որդես դեղամիջոց:**

Եւ միմյանց աջքալուսանք տալիս Աստծո տան վերածնունդ կապակցությամբ:

«Անչափ ուրախ եմ, որ հազարավոր տարիների խորքից կառույցը նորից վեր է հանել, որ, երկար տարիներ անտեր մնալով, ավերակների էր վերածվել: Համագյուղացիներս, ինչպես կարողացել ենք, աջակցել ենք եկեղեցու վերանորոգմանը: Այս կառույցը վկայում է, որ այստեղ հայ է բնակվել ի սկզբանե: Հազար երանի եմ տալիս այն մարդկանց, որոնց ձեռքը դիպել է այս սուրբ պատերին: Աշխարհում թող խաղաղություն լինի, ժողովուրդը թող առողջ լինի, երկար տարիների կյանք ունենա, մեր ազգի ամենավատ օրն էլ թող այսօրվա տոնակատարության նման լինի», - առանձնակի հպարտությամբ շաղատեցիներին շնորհավորեց Լեւոն պապը:

Գագիկ Խաչատրյանն իր անկեղծ շնորհակալությունը հայտնեց այն մարդկանց, ովքեր թե՛ նյութապես եւ թե՛ հոգեպես եկեղեցու վերանորոգման տարիների ընթացքում իրեն թեւ ու թիկունք դարձան: Նա առաջին հերթին շնորհակալություն հայտնեց իր ընտանիքին ու հարազատներին, շաղատեցի վարպետներին ու բանվորներին՝ հարկ համարելով առանձնացնել թոշակառուներ Յայկուշ եւ Պավլիկ Խաչատրյաններին, ովքեր դրամահավաքության առաջին արձագանքողը եղան՝ իրենց համեստ լուծման ներդրելով այս սուրբ գործում:

Գագիկ Խաչատրյանը նշեց, որ եկեղեցու վերանորոգման աշխատանքը ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՏ 4

# Շաղախն այսօր. հայացք ներսից

**Շաղախն ունի 1252 բնակիչ, վարչական փարածքը՝ 11000հա, 2010թ. հողային բարեփոխմամբ գյուղի սահմանը հասավ մինչև 4այոց ձորի մարզ: Հիմնականում գերակշռում են արոսավայրերը՝ մոտ 7000 հա, այլ հողեր՝ 3000 հա, վարելահող՝ 982 հա, այգիներ՝ 10-15 հա: Գյուղում խոշոր եղջերավոր անասունների բանակը հասնում է 800-ի, մանր եղջերավորներինը՝ 3000-ի:**

Շաղատեցիները հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Բացի գյուղատնտեսական աշխատանքներից՝ աշխատատեղեր են ապահովում նաև դպրոցը, գյուղապետարանը, մանկապարտեզը, Սպանդարյանի կղզի, գյուղի տարածքում առկա փոքր հեկերը: Համագյուղացիներից ոմանք աշխատում են Սիսիանի զորամասում որպես պայմանագրային ծառայող: «Չեն կարող ասել, որ արտագաղթը մեր գյուղին էլ է սպառնում, բայց կան մարդիկ, ովքեր սեզոնին մեկնում են արտագնա աշխատանքի: Հազվադեպ ընտանիք է մշտական բնակություն հաստատում արտերկրում», – նշեց գյուղապետ Տիգրան Խաչատրյանը:

Համայնքային բյուջեն այս տարի կազմել է 21 մլն դրամ, որից դոտացիա՝ մոտ 15 մլն դրամ, մնացածը՝ սեփական եկամուտներ: Դպրոցում 2013-14 ուստարում եղել է 165 աշակերտ, որը մյուս համայնքների համեմատ նշանակալի թիվ է: Շաղախ համայնքում տարեկան ծնվում է միջին հաշվով 20 երեխա: Մանկապարտեզ է հաճախում 58 երեխա, որից հինգը՝ Բալաբից:

Ինչպես շատ ու շատ գյուղական համայնքներ, Շաղախը նույնպես ունի խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: 1970-ական թվականներից մինչև այժմ գյուղի խմելու ջրի խողովակաշարը չի փոխվել: Ամսփոքար է գյուղի ճանապարհների վիճակը: Ճիշտ է, համայնքային բյուջեով ամեն տարի որոշակի աշխատանքներ կատարվում են, բայց անհրաժեշտ է ճանապարհների հիմնովին վերանորոգում: Հին գյուղի տարածքում սողանք է առաջանում: Ամեն տարի գյուղացիների ուժերով կատարվում է աշխատանք, իսկ այս տարի Սյունիքի մարզպետարանը խողովակներ է տրամադրել, որպեսզի այն վայրերից, որտեղ ջուրը կուտակվում է սողանք է առաջացնում, դրենաժային խողովակաշարով հեռացվի: 1980-ական թվականներին գյուղը զագիֆիկացվել է, 2-3 տուն միայն անհարմարավետ դիրքի պատճառով զագիֆիկացված չէ:

Բազմիցս բարձրացված է արդեն չարչրկված հարցերից է մասնաբերի, կաթի իրացումը: Գյուղում ունեն կաթի հավաքման կայան, այս տարի նույնիսկ համայնքում պանիր են մշակել: Նախորդ տարիներին գյուղացիները կաթը հանձնել են «Սիսիան կաթ», «Աշտարակ կաթ» ընկերություններին: Շատ ավելի մտահոգիչ է մասնաբերի իրացման հարցը, մանավանդ այս տարի, երբ խոտը թանկ արժե (խոտի մեկ հակն այս տարի արժե 1000 դրամ), եւ գյուղացին ի վիճակի չի լինելու գնել, ստիպված հարկադիր մորթ պիտի անի, եւ դեռ կայունի չէ, թե իրացումն ինչպես պետք է կատարի:

«Եթե մասնաբերի եւ կաթնամթերքի իրացման գները վերանայվեին, ապա գյուղացին ավելի կշահագրգռվեր իր արտադրանքն ավելացնելու համար: Պետությունը վառելիք եւ պարարտանյութ է տրամադրում համեմատաբար ցածր գներով, բայց հաճախ գյուղացին գումար չի ունենում ժամանակին վճարելու համար եւ հետագայում, ստիպված, իրեն անհրաժեշտ վառելիքն ու պարարտանյութը ձեռք է բերում ավելի բարձր գներով», – ավելացրեց գյուղապետը:

Համագործակցում են «Վորլդ վիժն Հայաստան» կազմակերպության հետ, որ տարբեր ծրագրեր է իրականացրել այս տարիների ընթացքում: Մեծ աջակցություն է ցուցաբերվել Շաղախի մանկապարտեզին՝ շենքի վերանորոգման, զագիֆիկացման եւ գույքի ապահովման հարցերում: Դպրոցի տանիքը վերանորոգվել է դեռևս տարիներ առաջ, իսկ



Տիգրան Խաչատրյան

չենք մանրողովին վերանորոգման եւ զագիֆիկացման կարիք ունի:

Այս տարի «Վորլդ վիժն» կազմակերպության հետ համատեղ 3 հա ոսպ են ցանել: 4-5 հոգի մասնակցել են ոսպի եւ կտավատի մշակման նպատակով կազմակերպված վերապատրաստման դասընթացների: Ճիշտ է, բերքատվությունը բարձր չէր, 1 հա-ից ստացվել են 500-600կգ ոսպ, բայց քանի որ ոսպի գինը բարձր է, արդյունքից գյուղապետը դժգոհ չէ:

Ռազմավարական գործակալություն հի-ի հետ համագործակցության շրջանակներում անցյալ տարի Ստեփանավանից ցլիկներ եւ կովեր են բերել, որոնց համար սիսիանյան բնակչի մայական պայմաններն այնքան էլ նպաստավոր չեն: Արտատեղերում ՌՁԳ-ն ծածկ է դրել, իսկ «Վորլդ վիժն» աջակցությամբ այնտեղ պահակատեղի են կառուցել եւ կթի սրահ: Արտավայրերում անասունների խմելու ջրի հարցը լուծվել է մի քանի տարի առաջ՝ հեռագնա երկու յայլաղում ջրիմուղներ տեղադրելով:

Գյուղի հրատապ խնդիրներից է նաև գյուղտեխնիկայի թարմացումը: Խորհրդային ժամանակաշրջանից մնացել է ընդամենը մեկ կոմբայն: «Լավ կլիներ, եթե պարկը համարվեր նորագույն տեխնիկայով, որպեսզի գյուղացին չխեղձանա: Շաղատեցիներն աշխատասեր են, չնչին աջակցություն ստանալու դեպքում

էլ լավագույն արդյունք կունենանք», – նշեց գյուղապետը: Նախատեսում են ստեղծել կոոպերատիվ, որ գյուղնախարարության հետ համատեղ փորձեն որոշակի տեխնիկա ձեռք բերել:

Խոսելով շաղատեցիներից մի քանիսի հետ՝ փորձեցինք գյուղի խնդիրներին նայել գյուղացիների տեսանկյունից: Լեւոն պապը նշեց, որ հեռուստացույցը, համակարգիչները մարդկանց կյանքը փչացրին, նախկինում սոված ու սկզբը էին ապրում, բայց իրենց հայրենիքից չէին հեռանում, ներկայումս չեն ուզում պակաս ապրել եւ արտերկիր են մեկնում, մանավանդ երիտասարդները: Ցավալիկն այն է, որ աշխատատեղ չկա, երիտասարդները չեն կարողանում ընտանիք կազմել եւ փախչում են, չեն մնում, որ իրենց հայրենիքում քարը քարին դնեն: Լեւոն պապը նաև նկատեց, որ մեր դարում եթե փող ունես, մարդ ես, եթե չունես, մարդ չես:

Գյուղապետարանի աշխատանքներից գյուղացիները գոհ են, բայց գյուղն ունի բազում խնդիրներ, որոնք լուծման համար անհրաժեշտ է պետական աջակցություն: Բնավ էլ հուսադրող չէ հանգամանքը, որ գյուղացիները պնդում են, թե իրենց խնդիրները բարձրաձայնելով ոչինչ չի փոխվի, այսինքն՝ պետության հանդեպ երբեմնի հավատն այլևս անցյալում է մնացել: Հիմնական խնդիրն աշխատատեղերի բացակայությունն է, ապրանքների գնաճը: Երիտասարդներն աշխատանքի խնդիր ունեն, այդ է պատճառը, որ չեն մնում գյուղում եւ հարկադրաբար դիմում են արտագաղթի: Իրենց ապագան այստեղ են պատկերացնում, եթե, իհարկե, ապահովված լինեն աշխատանքով: Իսկ գյուղի մանուկների ցանկությունն այն է, որ շատ երեխաներ լինեն գյուղում, իրենց խոսքերով՝ «ապրում ենք էլի, գոհ ենք մեր կյանքից, այստեղ ծնվել ենք, այստեղ էլ պիտի ապրենք»:

Կարելի էր Սուրբ Գեորգ եկեղեցու վերածումը՝ գյուղապետը նշեց, որ երեւոյթը որջունելի է, ցանկալի է, որ մնան բարերարներ շատ լինեն, ովքեր կաջակցեն գյուղի հիմնախնդիրները լուծելու հարցում: Եվ եկեղեցու վերածումը, եւ ձիթան-թանգարանի բացումը, կարելի է ասել, հնագույն ավանդույթների վերականգնման նշանակալի քայլերից են: Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձան-աղբյուրը, որն անբարեկարգ ու անմխիթար վիճակում էր, վերակառուցեցին, իսկ Արցախյան ռազամարտում զոհվածների հուշակոթողը դեռևս բարեկարգման կարիք ունի:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Խմբագրական

# Տոն, որ Նախելառաջ հիշողության ու ոգեկոչման օր էր

ՍԿԻՉԲԸՆ ԷՏ 1

652թթ.), Մովսես Քերթոզ (Սյունիքի մետրոպոլիտ 722-729թթ.), Ստեփանոս Սյունեցի Երկրորդ (7-րդ դարավերջ եւ 8-րդ դարասկիզբ):

Պատմական մի ամբողջ էպոսայուն Շաղախի հետ է կապված Սյունիքի Հայկազյան տան՝ Հայկից սերված Սիսակի հաջորդների գործունեությունը: Դրանք անհատականություններ էին, ովքեր նշանակալից, որոշ դեպքերում՝ բացառիկ, դեր ունեցան հայոց պետականության պահպանման, հայոց արժանապատվությունն անաղարտ պահելու գործում՝ Սյունիքի մեծ նահապետ ու նախարար Անդրկ, Սյունյաց տեր Բաբիկ, Հայոց թագուհի Փառանձեն, Հայաստանի եւ Վրաստանի մարզպան Վասակ:

Հանրապետության պատմության մեջ ու առաջին դատապարտվող Վասակի մասին է, ի դեպ, Մեսրոպ Մաշտոցի վարքագիր Կորյունը (Ավարայրի ճակատամարտից հետո) գրել. «Այն ժամանակ Աստված տվեց, որ Սյունիքի իշխանության գլուխն անցավ քաջ Սիսական Վասակը, խելացի ու հանճարեղ եւ կանխագետ, աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ: Նա շատ նպաստեց Ավետարանի քարոզչության գործին: Նա, ինչպես որդին հորը հնազանդություն ցույց տալով եւ Ավետարանին վայել կերպով ծառայելով, մինչև վերջ գործադրում էր նրա (Մաշտոցի) հրամայածները»:

Սյունյաց աշխարհի մեր օրերի առաջին խորհող Ռոբերտ Գրիգորյանը (Էջմանցի) մի քանի տարի առաջ գիր հղեց Սյունյաց թեմի առաջնորդին՝ վերականգնելու Սյունյաց տեր Բաբիկի՝ Շաղախում սկիզբ դրած մի ավանդույթ, որը, սակայն, ուշադրության չարժանացավ: Առաջարկվում էր ամեն տարվա հոռի ամսի մեկի օրը (հոռի ամիսը սկսում էր սեպտեմբերի 10-ից) հայտարարել Սյունյաց աշխարհի մայր եկեղեցու օր՝ հետեւելով Բաբիկի սահմանած կարգին, որ արվել էր Շաղախի Ստեփանոս Նախավկա սուրբ եկեղեցու հայտնության օրը:

Կարծում ենք՝ Սյունյաց թեմի առաջնորդարանը, թեեւ ուշացումով, այնուամենայնիվ, կանդորադառնա այդ առաջարկությանը:

Նորոյա Շաղախի Սուրբ Գեորգ եկեղեցու վերածման օրը՝ 2014թ. օգոստոսի 28-ին, անկարելի էր չհիշել Շաղախի պատմության վերոնշյալ եւ բազում այլ դրվագներ, դարերի հեռավորությունից հարգանք չընծայել Սյունյաց աշխարհի հոգեւոր եւ աշխարհիկ մեծերին, ովքեր ժամանակին մեր երկրամասի հնագույն



«Հայոց այբուբենը» (գրել է Ն. Գրիգոր Խանջյան, 1981 թ., Մայր աթոռ Սբ Էջմիածին)

մայրաքաղաքում պատվախնդրությամբ ու արժանապատվությամբ ապավինող են ապահովվեցին Մեծ Հայքի Սյունիք նահանգի արգասավոր ընթացքը:

Փառք Բարձրալին, որ Սյունյաց աշխարհի հնամենի ոստան Շաղախը (թեւ ոչ երբեմնի հռչակով) շարունակում է հարատեւել, որ Սյունյաց մայր տաճարի լույսը (զոհն մասամբ) շարունակում է սփռել Սուրբ Գեորգ եկեղեցին՝ նորոգ տեսքի բերված ու սրբազան մյուռոնով վերածված:

Հարգանք ու պատիվ Շաղախի երեւելի գավակ Գագիկ Խաչատրյանին ու հավատավոր շաղատեցիներին, որ իրենց մտքով ու ջանքով հիմնադրեցին Աստծոյ այդ տաճարը:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵԹԱՆՅԱՆ

Տոնահանրությունը Շաղապում

ԼՈՒՍՏԱՎԱՐԸ ՆՈՒՔԱՐ ՂՎԱԹՅԱՆԻ

# Պատմական ակնարկ Շաղապ

**Սյունիքի հնագույն և ամենանշանավոր բնակավայրերից է, նրա մայրաքաղաքը, Սյունյաց գահագուլու իշխանների աթոռանիստը և եպիսկոպոսանիստը՝ սկսած 4-րդ դարից մինչև 9-րդի սկիզբը, երբ Սյունյաց տեր Վասակը ռազմաքաղաքական հանգամանքների բերումով իշխանանիստը տեղափոխեց Վայոց ձորի Եղեգիս ավանը, իսկ եպիսկոպոսական աթոռը՝ Տաթև:**


Շաղապը գտնվում է Որոտանի աջ ափին, Սիսիան-Նախիջևան խճուղու ծախակողմը:

մյան հատվածում՝ Շաղապ գետի՝ Որոտանի միախառնվելու տեղում՝ Սիսիանից 19կմ արևմուտք: Պատմական Շաղապը տարածվում է նաև այդ հատվածից դեպի հյուսիս-արևմուտք՝ մինչև Շաղապի վանքն ու բերդը: Այն միաժամանակ դեպի Վայոց ձոր է Այրարատ և դեպի Նախիջևան ու Վասպուրական տանող ճանապարհների խաչմերուկն էր: Ստ.Օրբեյան պատմիչն իր նշանավոր «Պատմություն տանն Սիսական» երկի 9-րդ գլխում շարադրում է Սյունյաց Անդոկ իշխանի գործունեությունը՝ կապված Շաղապի հետ, որը, անշուշտ, ունի նաև վիպական հենք: Անդոկին փոխարինում է Բաբելը, ում արտոնվում է Սյունիքի գահակալ դառնալ՝ Բագրատունի և Սամվելունյան իշխանների հետ հավասար աստիճանով: Շաղապի՝ որպես Սյունիքի գլխավոր քաղաքի բարձրացումը Մորուս Զասրաթյանը բացատրում է հարմարավետ դիրքով: Այնուհետև Շաղապի մասին հիշվում է

Ստ.Օրբեյանի «Պատմության» 23-րդ գլխում: 727թ., երբ արաբական զորավար Սրվանն արշավում է Գայաստանի վրա, մեծ ավարով գալիս է Սյունիք և հաստատվում Շաղապ բերդապարտիկում: Սակայն մինչև Սյունիքի (Բաղքի) թագավորության ստեղծումը Շաղապում իշխանական տները շարունակում էին հարատևել: Օրբեյանների օրոք Շաղապը եական դեր չի կատարել Սյունիքում: Այն Զին ցուցակում նշվում է 12 հարկաչափով, այսինքն՝ միջին մեծության գյուղ էր: Սակայն նույն ցուցակում կա նաև Շաղապի վանք՝ 6 հարկաչափով, որը հուշում է նաև գյուղի և վանքի՝ դեռևս հարատևող ազդեցությունը շրջապատի վրա: Պետք է ենթադրել նաև, որ Շաղապի վանքն իրոք պահպանել է ինքնուրույնությունը, որովհետև 844թ. մի կտակագրում Սյունիքի կրոնական մեծերի շարքում դեռևս նշվում է Շաղապի վանքի վանական Սիմեոնի անունը: Օրբեյանների իշխանության անկումից

հետո Լենկ Թեմուրի ավերիչ արշավանքներից հյուսիս Շաղապը աստիճանաբար անկում ապրեց և վերջնականապես դատարկվեց ռուսական տիրապետությունից առաջ: Տաթևի 1781թ. հարկացուցակում Շաղապը դեռևս կար՝ 3250 դահեկան հարկով, այսինքն՝ միջին մեծության գյուղ էր: Սակայն գտնվելով մեծ ճանապարհի հանգույցում՝ բերեւս ավելի շատ տուժեց: Եվ միայն 1828-29թթ. Պարսկաստանի հետ, Մարաղա և Սալմաստ գավառներից գաղթած հայերը, մինչ այդ այնտեղ բնակվող յոթ ընտանիքի հետ միասին, վերականգնեցին գյուղը: Կասկածից վեր է, որ Շաղապի տարածքում պահպանվում են բազմաթիվ հնագիտական գաղտնիքներ, որոնք հնարավոր կլինի պարզել միայն հնագիտական պեղումների շնորհիվ:

Պատրաստեց  
ՆՈՒՔԱՐ ՂՎԱԹՅԱՆԸ



ԼՈՒՍՏԱՎԱՐԸ ՆՈՒՔԱՐ ՂՎԱԹՅԱՆԻ



Տոնական Շաղապին ողջունելու երեկը Սիսիանի «Գրան» դարային համույթը (դարուսույց՝ Արման Դավթյան)

## Եվ Հիսուս ասաց. «...Պիպի երկրպագես քո Տեր Աստուծո՛ւն և միայն նրա՛ն պիպի պաշտես»

ՍԿԻՉԲԸ՝ ԷՋ 2

Ներին աջակցած բոլոր մասնակիցների անունները մեկ առ մեկ գրի են առել, որ եկեղեցուն կմնա որպես պատմություն. «Մենք այսքանով չենք սահմանափակվելու, այս գործընթացը պետք է շարունակական լինի: Շաղապի մատուռները, պատմական արժեք ունեցող հուշարձաններն ու խաչքարերը պետք է վերականգնվեն, և, որ ամենակարևորն է, կառուցածին էլ պետք է սրտացավորեն մոտենանք և պահպանենք աչքի լույսի պես: Համայնքի բնակիչներով միասնաբար պետք է պայքարենք մինչ օրս էլ գանձեր որոնելու նպատակով Շաղապում ավերածություններ, սրբապղծություն անողների, օրեցօր ծավալվող աղանդավորության դեմ: Բոլոր շաղապեցիներին մաղթում են քաջառողջություն և երջանկություն, շաղապեցիները բոլոր ժամանակներում էլ կարողացել են արարել, իրենց արդար

քրտինքով վաստակել օրվա հացը և արժանի ձեռով վայելել կյանքը, որ ամենաթանկն է աշխարհում»:

Բազմավաստակ ուսուցիչ Ռազմիկ Զարուբյանը Սուրբ Գեորգ եկեղեցու վերածումը Քրիստոսի հարության տոն համարեց շաղապեցիների համար, իսկ բարերար Գագիկ Խաչատրյանին էլ մաղթեց, որ հավիտենության երթում մշտապես հնչի նրա անունը:

Միջոցառմանը ներկա էին նաև ԶԳ գյուղփոխնախարար Սամվել Գալստյանը, ԶԳ գինված ուժերի 1-ին բանակային զորամիավորման հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանը, տարբեր համայնքների ղեկավարներ և այլք, ինչպես նաև բանաստեղծուհիներ, ովքեր, կարևորելով պատմական պահը, իրենց բանաստեղծությունները ձոնեցին ոչ միայն Շաղապին, այլև եկեղեցու վերանորոգման բարերարին:

Տոնական համերգին մասնակցեցին Սիսիանի Զամո Սահյանի անվան մշակույթի կենտրոնի ժողգործիքների համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Զարուբյան Գրիգորյան), Սիսիանի արվեստի դպրոցի «Գրանտ» պարային համույթը (պարուսույց՝ Արման Դավթյան), Զամո Սահյանի անվան մշակույթի կենտրոնի և Շաղապի միջնակարգ դպրոցի սաները:

Խնկաբույր Շաղապը, վերածված Սուրբ Գեորգ եկեղեցին, որի լույս խորանները մի ժամանակ մութ ու դատարկ էին, այդ օրը մարդաշատ էին և այն համոզմունքն ունենք, որ այնտեղ նոր հորիզոններ կբացվեն՝ անցյալի ավանդույթները վերականգնելուն միտված:

ՈՒՍԻՆԵ ԶՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝  
**ՍՍՄԿԵ ԼԵՆԵՍՆՆՅԱՆ**

ԳԻՒՄՆԱԿՈՒ ԵՎ ԳՐԱՐԱՐԱԿՈՒ «ՆՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱԿՄԱՆԱԾՎԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շաղապ 20/32:  
Հեռախոս՝ (0285) 5 25 63,  
(091) 45 90 47,  
(077) 06 28 02:

Էլ. փոստ՝ syuniacyer.kir@mail.ru  
Ինտերնետ՝ www.syuniacyer.kir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Լույս էրը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): «ԳՐՎԱԶԳ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկիր» պարտադիր է: © Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Օտպված՝ 1 տպագրական մամուլ: Տպարանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 05.09.2014թ.: